

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Book Review – Рецензия

ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՄԻՆԱՍ ԲԺՇԿՅԱՆՑԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Der Reisebericht des Minas Bžškeanc‘ über die Armenier im östlichen Europa (1830), übersetzt und kommentiert von Bálint Kovács und Grigor Grigoryan, hg. v. Bálint Kovács und Grigor Grigoryan, unter Mitarbeit von Alexandr Osipian, Böhlau Verlag: Wien/Köln/Weimar, 2019, 485 Seiten, ISBN 978-3-412-50724-4.

Բալինտ Կովաչի և Գրիգոր Գրիգորյանի աշխատասիրությամբ ու Ալեքսանդր Օսիպյանի աշխատակցությամբ հրատարակվել է Վենետիկի Մխիթարյան հայրերից Մինաս Բժշկյանցի (1771-1851) «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին» (Վենետիկ, 1830 թ., 424 էջ) ուղեգրության գերմաներեն թարգմանությունը՝ ընդարձակ ներածությամբ և ծանոթագրություններով: Հատորի մեջ ընդգրկված է նաև գրվածքը լուսաբանող երկու առանձին հոդված.

Ա. Մարկ Նշանյան, «Մինաս Բժշկեանցի ուղեգրությունները» (*Die Reiseberichte von Minas Bžškeanc‘*, էջ 40-71),

Բ. Բալինտ Կովաչ, «Հայոց մայրաքաղաք Անին և «Անիի հայերը» Տրանսիլվանիայում՝ որպես խմբի ձևավորման խորհրդանիշ (*Symbol*) 19-րդ դարում» (*Die armenische Hauptstadt Ani und die „Ani-Armenier“ in Siebenbürgen. Ein Symbol der Gruppenbildung im 19. Jahrhundert*, էջ 72-83):

Ներածության մեջ (էջ 13-39) նշվում է, որ Հ. Մինաս Բժշկյանցի «Ուղեգրությունը առաջին հրատարակությունն է, որում Արևելակենտրոնական և Արևելյան Եվրոպայի հայերը ներկայացվում են որպես մեկ միասնական էթնիկ խումբ՝ ընդհանուր ծագման ընկալմամբ: XIX դարում, ազգայնական շարժումների ծավալումից քիչ առաջ, Մինաս Բժշկյանցը նախաձեռնում է մի հրապարակում, որում հիմք է դնում Արևելակենտրոնական և Արևելյան Եվրոպայի հայերի

համար ընդհանրության զգացումի՝ խարսխված նրանց ծագման, այն է՝ Անի քաղաքից ընդհանրական ծագման առասպելի (*Herkunftsmythos*) վրա» (էջ 13): Ապա ներկայացվում են Հ. Մինաս Բժշկյանցի կենսագրական տվյալները և մանրակրկիտ քննության է ենթարկվում «Ճանապարհորդություն դեպի Լեհաստան...» գրվածքը:

Ա. Մարկ Նշանյանի հոդվածը «Գեղագիտական ազգայնություն» (*Ästhetische Nationalität*) գրքում Հ. Մինաս Բժշկյանցին և հատկապես նրա «Պատմություն Պոնտոսի» գրվածքին վերաբերող էջերի ամփոփ վերաշարադրանքն է:

Բ. Բալինտ Կովաչի վերոնշյալ հոդվածը նրա՝ Պրոֆ. Շտեֆան Թրոյբսի 60-ամյա հոբելյանին նվիրված ժողովածուում հրատարակված՝ «Անիի հայերին» (Կովկասի, Օսմանյան կայսրության և Արևելյան ու Արևելակենտրոնական եվրոպայի հայերի մի մեծ խումբ, որն իրեն գիտակցում է որպես «Անիի հայեր», տե՛ս *Der Reisebericht des Minas Bžškeanc՝ über die Armenier im östlichen Europa (1830), էջ 72*) նվիրված ուսումնասիրության¹ լրամշակված տարբերակն է:

Հ. Մինաս Բժշկյանցի «Ճանապարհորդություն դեպի Լեհաստան ու այլ երկրներ, որ բնակեցված են հայերով, որոնց նախնիները սերում են Անի քաղաքից» գրվածքի գերմաներեն թարգմանությունը (էջ 85-462) կատարվել է բարեխղճորեն և երկար տարիների աշխատանքի արդյունք է: Բազմաթիվ ծանոթագրությունները պարզաբանում են տեքստի բանասիրական խնդիրները, աշխարհագրական անունները և այլն:

Այս հրատարակությունը խիստ կարևորվում է նաև մեկ այլ առումով. Բժշկյանցի ուղեգրության վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չկան (գրքի հեղինակները նշում են միայն երկուսը): Այս համառոտ հաղորդամբ ցանկանում ենք նեղ մասնագետների և լայն հանրության ուշադրությունը հրավիրել տվյալ հրապարակման վրա, իսկ այն հրատարակության պատրաստողները միայն ուրախությամբ կընդունեն գործընկերների արձագանքները, դիտարկումներն ու առաջարկները:

¹ Հմտ. **Bálint Kovács**, *Der imaginierte Ursprung der Armenier. Die armenische Hauptstadt Ani - als „lieu de memoire“*, Leipziger Zugänge zur rechtlichen, politischen und kulturellen Verflechtungsgeschichte Ostmitteleuropas, hg. von Dietmar Müller/Adamantios Skordos, Leipzig, 2015, 251-260.